

# ԽԱՅԻՄԱՆ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՆՈՅԵՄԵՐԻ 26-ին. Թիֆլիս. №48.

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ք Ա Ղ Ա Ք Ը

(Առաջիկայ 1912 թ. Թիֆլիսի քաղաքային բոլոր տեսակ եկամուտները սպասուած է 2,025,000 բուբուլոց աւել, իսկ ծախքը՝ 3,499,000 բուբուլոց աւել է լինելու.)

Լրագրներէն



P. S. POTTER

ՌԱՒԵՆՅԱՆՈՅՅ Պարոն Խատիսեան, այս ինչ էք անում, ինչի էք ինձ պարտքի տակ դցում. այսչափ մուրհակներ ես ինչ եմ անում, Երբ պիտի վճարեմ:

— Ձեզ համար ով, իմ տիրուհի, շքի վիշիվկա ու պրօշիվկաներ եմ գնել—ծախքը դրա վրէն է որ գնում է:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

# ՄԱՐԿԱԿ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ԵՍԲԱՔ ԱՆԽԱՓԱՆՆ ։


Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Աճեցածես թերք բոլոր բնագիծերի համար

«ԽԱՔԱՐԱԿ» շաբաթին ծրարադրվում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի: Հասցէն՝ Тифлисы, редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան



«ԽԱՔԱՐԱԿ» ԵՐԵՎԱՆ  
Բ Ա Ք Ա Ն Ե Գ Ր Ե Ն Է

Տարեկան . . . . .	5 ռ.
Կէս տարին . . . . .	3 »
Երեք ամիսը . . . . .	1 » 50 կ.
Ամիսը . . . . .	— 50 »
Թիֆլիսում տարեկան . . . . .	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք զխիվայր:

«ԽԱՔԱՐԱԿ» ՕՐԱՑՈՅԸ

ԻՄ ԷՐԵՎԱՆ

1911 ՆՈՅԵՄԻԵՐ 30 օր

# 26

Суббота **ՀԱՐԱՔ** Ծագածո  
Լուսնի 8

**27** (կիր.) Տօն ամենախ սրբոց հնոց և նորոց, յայտնի և անյայտից, որք կիրան՝ բայց ոչ կշտացան, զուրկին՝ բայց ոչ լիպան:

**28** (ք. ղ.) Շաբթեղարձ յօրհիւանին տիկին Զարէլի, որ վասն երեսնամեայ յօրհիւանին իւր նիւթապէս ապահովեալ է ի հայոց պզգէն ցերկերդ զալուստն Յիսուսի Քրիստոսի:

**29** (չ. ղ.) Յիշատակ մեռելոց հայոց դերելոց, որք գերի են ընկեալ ի ձեռն մերոց կոշիկոց և ոչ կարեն ջակել թէ ի Ս. Մ. Ն. Մ. Ը՝ տառերէն հին է ճշմարիտ և որք ծուրը:

**30** (չ. ղ.) Պաս է և արգելեալ է խօսել ի հայ լեզու, միայն թէ աշակերտ-աշակերտունիք հայոց դպրոցաց կարեն կտրտել ի ուսուց լեզու:

**1** դեկտ. (ե. ղ.) Անւանակոչութիւն սրբոյն կլայեկչեանի մարտիրոսացելոյ, որ զկես կլայեկեալ «Բերլինի դահլիճ» պիտի, որոշեալ է փոխադրել «Թիֆլիսի Մահիճ» պիտես, ուր ինքն պատկեացի և նշխացի հանգիստ քնով, զի անգութ «Միտա չի»-ն միւս անգամ ոչ խանդարեացի հանդիսան նորա:

**2** (ուրբ.) Տօն սրբոյն Սիմօնայ Եանազարեանի, որ որոշեալ է սեփական հեռագրատուն բանալ, քանզի օրտական չորս հեռագիր՝ առաքել լրագրաց, բայց ընդհանուր հեռագրատունն միայն երեքն կարէ ընդունել:

Աստղ. ամսաբ. և օրացոյցագէտ  
Փարեմուզ

Մեր մի քանի թեմերու ու իլամի օխնած հու պետած Թիփլիզու թեմի նստրութիւններէմէն եղը մէ քանի գիշեր իրար վրայ էնց միալար մէ էրազ իմ տեսնում. ու ինչ իմ տեսնում, գիշերք.—վուր գիղենաք էլ ինչի իմ ասում, ախմախմ պահ, պահ, պահ էն ինչ տեսայ, տօ. դէղի ծծիր, դուն բախօսիս. վահ էն ինչ տեսայ... ան թէ վունց ասիմ. ասիմ քանի-քանի մարդկանց էպիդկոպոզներու, վարդապետներու, տէրտէրներու պիտի բեղամաղ անիմ, սրտնիրը ճաքեցնիմ, կուլի վուր մեռնելու էլ սարաք դառնամ, չունքի կաթիլիկոսական հարցով զբարաւած էր քարվան կտրող աթամորդիքը շատ նէժնի (քնքոյշ) սիրտ ունիմ... շուտ կտարուող, մնցոր բարիշնա աղջկայ սիրտը ոնց որ առւէթու շուշէն: Թէ չասիս—յիս մէ քիչ բեղամաղ կուլիմ, Սամսոն Զերքեղովը շատ բեղամաղ կուլի, Արշակ Միլովը հօ էլ մի ստի, Զգրեմէն էլ օջովի նիսիա ապրանք չի տայ ու դիփ նաղը կուծախէ ու մինձ զարար կտեսնէ. Գասպար Կալատուղովը էնենց փիս բեղամաղ կուլի, վուր բարկութիւնէմէն զլիցը փափախը վէր կու ննգնի ու վուտնիւրէմէն էլ քօշիքը դուս կու պրծնին... Աէ ախպէր, չէ, յիս՝զրուստ խօսող մարդ իմ, դրուստ խօսիլը լաւաշ իմ. արխէին կացէք, ձիս թամքած ունիմ. ասիլս ու ձկլիս մէկ կուլի:

Յիս մէ օղորմած հոգի պապա ունէի. անումը Իսայ էր (նրա մամի անումը կի չիմ գիղի չունքի չիմ տեսի). շատ հոգէսէր պատուական, արուսով աղուհացով մարդ էր (արա յիս վուր չգովիմ, ով պիտի գովի. անկճոււմդ ասիմ պիանիցներու թաքաւոր էր).

նա շատ առկնիր գիտէր, ամենին, ամենին կու խրատէր ու վիւջն էլ իր հանդի մէ լաւ սազով, կօսէր, «այ վուրթիք, ով ականջ ունիցէ՛ թող լու իցէ, ով չունիցէ՛ թախթաքիթի իցէ»: Դրանով ուղում էր ասի, թէ օվոր ասածս կուլսէ՛ նա լու է, կուլուչի, կուծիլի. ով չի լսի՛ նա բաղլինջ է, իփոր վազի ամենն էլ կուտեսնին ու կը ճխտորին:

Հիմա դուք իք, կարթացողներ, գուզէք լու դարէք, գուզիք թախթաքիթի դարէք:

Սակսիմ էրազս.

Միթոմ էջմիածնում իմ. տեղակալի հրամանքով միաբանները խիստ մինձ գուրծիին. թագա կառաւաթ ին առի, իրա մատրասներով ու չարսաւ ու լնկով, առաջը գցելու խալիով, մէ սէլի վրայ յարցիլ ին ու էրէնէմէն էստի ին բերի. առաջ-առաջ վանքն ին մտի ջէհել Խորէն էպիսկոպոզը, կուլսքէրքին քափ կտրած էրկու պառաւ տէրտէրներ, էդնէմէն էլ... թուրմէ յիւ չին մտիկ տւի, իրանք քշիլ ին ու առաջ ին էկի. էդնէմէն էլ կի՛ մէ սնաթից էդնէն՝ սէլն եկաւ, մէջը վունցոր վէրիվն ասի՛ կառաւաթը դրւած:

Հարցնում իմ, թէ՛ ախպրտիք, մինչկլի հիմի բաս միր ու ձիւր կաթիլիկոսը կուշէտիկ վրէն է քնած էլթ, թէ՛ դիւանի վրայ ամուլ չէ՞ ձիղամա, վուր մի քանի մանէթ խընայիլ իք ու կարքին կառաւաթ չիք ունեցի նրանց համա. արա դա ըլելու բան է:

—Չէ, ինչ իք հրամայում, պարուն ճաճուլեանց, դա աղաթ է. կաթիլիկոսը վուր մեռնում է, կառաւաթն էլ հիղն է մեռնում ախր: Բաս չիք իմացի՞, էդ բանը հազար շուրս հարուր տարուց աւել է վուր էտէնց



է. դա մի ր մօզօնածը չէ. դա սուրբ աղաթ է:  
—Վահ. այ քիզ լաւ բան. յիս թիֆլիս  
կէհամ թէ չէ՝ էդ բանը կարապիտին ան-  
պատճառ կօսիմ ու կարապիտին էլ Հէրապի-  
տին կօսի.

—Սնուրի հայրիւր. (շատիւրը իմ վուրթու  
տօլ էին, յիս կի հէր էի ասում, ինչ է փա-  
ռաջա ունէլ) էդ հօ Մօլլա-Նասրազնի բանը  
դառաւ, էն պղնձի առակն իմ ասում հա:

—Հրամանքիս, վուրն չէ, Մօլլա-Նասրա-  
զնին թէ դուք հուժ-հուժ իք ճանչնում,  
մինք էփած ինք ճանչնում:

—Քանի վուր դուք ինձմէն լաւ իք ճանչ-  
նում, էլ ասելու բան չունիմ. ձիզ հիզ դա-  
բուլ իմ: Համա կարապիտին կի կօսիմ:

Հա, էրապս շարունակիմ:

Ղուրթ է ամէնքն էլ գուրձի էին, սաւահի  
կառաւարը ուրիշ գուրձի էլ ունէին, համա  
ամէնքի էրէսը խիտ թըթւած էր. էնէնց  
թթւած, վուր ամէն մէկի էրէսի տակը մէ-  
մէ քիլա դնէիր՝ հինգ նմուտումը մածունով  
կու լցւէր. աշխատում էին, վուր ամէնն էլ  
գուրձ անին, ամէնն էլ վազում էին, ամէնը  
էլ անհանգիստ էին, էրէսներին ինչ-որ վախ  
կար, շտապում էին, գնում էին, գալիս  
էին, ծուռում էին, դրսուռում էին... Ամէն  
կարքի էին բէրում, վանք, ճեմարան, վի-  
հարան, տպարան, մատենադարան, ջրի ամ-  
բարը, հացի ամբարը, իւրքի գինու մառա-  
նը, մէ պարապ մարդ չէիր գթնի, պառաւ,  
ջէհէլ, ամէնքը ձեռ ու վուտ էին դառի,  
գուրձի էին կպի, կրակի պէս աշխատում  
էին...

Իմ աչքերուն յիս չէի աւտում. տօ գանա  
սա իմ տեսած էջմիածինն է, գանա առաջ  
էլ էսէնց գուրձ էին անում... Ի՞նչ գուրձ,  
ինչ բան. ամէն մէկը իրա համա կաթղիկոս  
էր. գանա կաթղիկոսը նրանց կանար բան  
ասի. հիմի կի՛ ջէր թապա ջոգած կաթղիկոսը  
Բաթում չհասած՝ սրանք ժամ ու մած ին  
էկի. ու գիղթը ում շնորհիւ...

Գէվուրք արթը—չէ.

Մէսրոպը—չէ, բան չունիս.

Սորէնի—այ նրա սիւ ու քորփա միրուքն  
ուտիմ.

Չէ, չէ, չէ, սրանք հօ միշտ էլ էստի ին,  
սրանց մէջ ո՞վ կու վախենայ. իրանք իրանց  
մէջ չին վախենում, ուրիշները ի՞նչ կու  
վախենան!

—Բաս ծվ է, ասում իս դուն՝ կարթացող,  
սիրող տկակալով:

—Օրմանուլը, Օրմանուլը, հիմա հօ հաս-  
կացած. միր քնածներուն մեհակ նա կու  
զարթեցնէ, խիլքի նա կու բէրէ, թէ չէ օյ  
օյ չի կանայ:

Քանի երաղէմէն զարթնում իմ, իմ գլու-  
խըս հովցած էլըլում:

հակալ ճաճալիտեց



**ԶԲՕՄՆՈՒՄ ԷՒՆՔ**

Զբօսնում էնք... բայց ո՞չ լուռ էինք.  
Մի երրորդ անձը վկայ մեր խօսքին՝  
Հակում էր անվերջ. Օ, անգութ մարդիկ...  
Նա բռնանում էր մեր զգացմունքին:

Ախ, երբեմն կեղծ, անմիտ ու դատարկ,  
Ինչպէս ասում են, լոկ դէսից դէնից  
—Դուրս էինք տալիս. իսկ մի թոյլ ակնարկ...  
Ծուխ էր բարձրանում գէհեն մեր սրտից:

Օ, ինչ քաղցր էր խօսել, լոկ խօսել  
Այն թովիչ, ցնոր յոյզերի մասին,  
Ինչպէս կուգէինք գգեւի երազել,  
Կամ գոնէ լացել-ազատ, միասին:

Բայց լուռ էինք լուռ ու խորհում  
—Անհուն լուրթեան տաղտուկը հսկայ,  
Եւ անվերջ խորհում, անվերջ երազում,  
Մի նոր տեսութեան մօտիկ ապագայ:

Եւ անցան այդպէս մի քանի վայրկեան  
Սև արգիլքները մեզ բաժանեցին,  
Բայց մեր սրտերը անվերջ անբաժան,  
Քար լուրթեան մէջ կարծես ուխտեցին

—Հեռանալ կորչել անսիրտ աշխարհից  
—Ազատ բնութեան գիրկը ապահով,  
Եւ այնտեղ հեռու... հեռու մարդերից  
Վայելի կեանքը ազատ անխռով:

Այո, լոկ սէրը չունի բարեկամ,  
Ոչ գութ, ոչ բաժին-բախտից, աշխարհից,  
Նա հալածւած է՛, ո՞չ մինչև անգամ  
Եւ Աստուածանից, սիրոյ դրախտից:

ԽԵՆՔ



**ՄՈՂՈՐԵՆԸ ԶՈՅԿԵՐ**

Ընթրիքից յետոյ տիկին Սարսաղեանը  
մտաւ ամուսնու առանձնասենեակը և տես-  
նելով նրան ինչ որ թղթեր բրբրելիս հարց-  
րեց.

—Սմբատ, դու դեռ չե՞ս քնելու:

—Ոչ, սիրելիս,—պատասխանեց Սարսա-  
ղեանը,—ես դեռ մի կարևոր գեկուցում ու-  
նեմ, պէտք է վերջացնեմ, յետոյ:

—Ի՛նչ որ այդպէս է, ես գնում եմ քնելու,  
քունս սաստիկ տանում է:

—Գնա, աղանեակա. երբ ես վերջացնեմ  
գործս, այստեղ թախտի վրայ կըպարկեմ,  
հրամայիր, որ անկողինս այստեղ բերեն:

—Շատ լաւ,—ասաց կինը և համբուրե-  
լով ամուսնու հետ, դուրս գնաց, իսկ Սար-  
սաղեանը նրա գնալուց յետոյ, մի կողմը  
շպտեց թղթերը և սկսեց ցած ձայնով ծի-  
ծաղել:

—Հա, հա, հա... յիմար կին, ինչպէս էլ  
հաւատաց է... չէ, լաւ պրծայ:

Շատ չանցած, վերմակը և բարձը կռնա-

տակին ներս մտաւ Սարսաղեանը ինչպէս  
տասարդ, կարմրաթշիկ և շեղծիկ պարտի-  
նը ու սկսեց Սմբատի համար անկողին  
պատրաստել թախտի վրայ, իսկ նա մօտե-  
ցաւ աղախնուն, գրկեց, համբուրեց և ասաց.

—Չմոռանաս, Նաստեա. ժամը 12-ին կը-  
սպասեմ քեզ դահլիճում:

—Լաւ, պարոն,—ասաց աղախինը և դուրս  
գնաց:

Սարսաղեանը վերցրեց սեղանի վրայից  
թղթերը, դրեց արկղում, կողպեց, յետոյ  
հանեց սիւրբուռն ու կօշիկները, հագաւ խա-  
լաթը և տնային շուստերն ու սկսեց անցու-  
դարձ անել սենեակում, ուրախ-ուրախ ձեռ-  
քերն միմեանց շփելով:

Սեղանատան մեծ ժամացոյցը զարկեց  
ժամը 12-ը:

Ձին... ձին... ձին... ձին... ձին... ձին...  
ձին... ձին... ձին... ձին... ձին... ձին...

Եւ դեռ նրա վերջին զարկը չէր կորել օ-  
դի մէջ, երբ Սարսաղեանը զգոյշ քայլերով  
դուրս եկաւ իր սենեակից, անցաւ սեղանա-  
տունը, մտաւ բոլորովին մութ դահլիճը և  
մեծ զգուշութեամբ, առանց մի ձայն հա-  
նելու, նստեց բազկաթոռի վրայ ու սկսեց  
սպասել:

Շուտով պէտք է դար Նաստեան, որի հետ  
նա վաղուց սիրային կապեր էր հաստատել  
և նոքա, կնոջից ծածուկ, մի քանի երջա-  
նիկ ժամեր կանցկացնէին միասին:

Օ՛, որպիսի անձկութեամբ և զսպւած  
կրքով է սպասում նա այդ վայրկեանին:  
Նաստեանի երիտասարդ, փափիլիկ իրանը իր  
կրծքին սեղմելիս, նա մի այնպիսի երջան-  
կութիւն էր զգում, որ նկարագրել անկա-  
րելի է:

Ահա, բացեց դէպի դուրսը տանող դու-  
սը և հազիւ լսելի ստնածայն լսեց, որը  
սակայն ուղղում է հակառակ կողմը: Կար-  
ծելով, թէ Նաստեան չի կարողանում գրա-  
նել իր թագստեան տեղը և կամենալով  
ցոյց տալ նրան այդ, նա կամացուկ կան-  
չում է:

—Մ՛ս...

Նրան այնպէս թւաց, թէ հակառակ կող-  
մից էլ մի այնպիսի ձայն լսեց, բայց ու-  
շադրութիւն չդարձրեց, որովհետեւ այդ ժա-  
մանակ ներս մտնողը քայլերն ուղղեց դէ-  
պի նրան:

Սարսաղեանը հազիւ էր բարձրացել տե-  
ղից, երբ յանկարծ երկու ուժեղ ձեռքեր  
փաթեցին նրա վզովը, նա զգաց իր երե-  
սին շատ մօտիկ շնչառութիւն և ինքն էլ  
բաց արեց թևերը, գրկեց Նաստեանին ու  
սկսեց խելագարի պէս համբուրել նրան ա-  
րանգ... արագ և ամուր...

Բայց այս ի՞նչ է.


Նա գգում է, որ համբուրելու ժամանակ  
ինչ որ բան է ծակոտում իր երեսը և երբ  
մտածում էր, թէ ի՞նչ կարող է լինել, յան-  
կարձ, հէնց նոյն ընդէին էլ դիմացի կող-  
մից նրա ականջին է հասնում կրքոտ համ-  
բոյրների ձայնը...

Մի վայրկեանում նա մի կողմ է թռչում,

ՀԱՅԿԵՆՑԻ  
ՆՈՅՆՈՒԹՅՈՒՆ



Մարդը.—Կարելի է մտնել ննջարանդ:  
 Կինը.—Մտի՛ր. բայց ի սէր Աստուծո՛ւ դուռը մի փակիր:  
 Մարդը.—Բայց... ի՞նչու.  
 Կինը.—Ես այնպէս եմ փորձած, որ եթէ դուռը փակես—մենք անպատճառ կը կուենք:  
 (Սատ.)



շտապով շրջում է էլեքտրական ջանի կոճուկը, գակիճը լուսաւորում է և... նա մընում է քարացածի պէս տեղը կանգնած:

Իւր առաջ կանգնած է մազմզոտ, լայնաթիկունք դռնապանը, իսկ տասը քայլ հեռու Նաստեան և իր կինը գրկախառնուած, խանդավառ կերպով համբուրում են...

էլեքտրական ջանի լոյսից շլացած, երկու մալորւած զոյգերը էլ մի բոլակ մնում են շրւարած, տեղները կանգնած և յետոյ գլուխները կրծքներին իջեցրած, լուս ու անձայն մէկ-մէկ դուրս են գալիս դանիճից և հեռանում...

Սարսաղեանը ներս է մտնում իր առանձնասենեակը և խալաթը հագին, առանց չուստերը հանելու, երեսնիվայր պարկում է թախտի վրայ ու քնում:

Միւս օրը Նաստեան ու դռնապանը իրանց հաշիւները ստանալով, իրերը կընստակերն առնելով, գլխիկոր դուրս են գալիս Սարսաղեանների տնից:

Վ. Բուսմ.



— Մայրիկ ջան, ինչու հայրիկի գլխին մտքեր չկան:

— Որովհետեւ, սիրելիս, հայրիկը զբաղւած է լինում մտքերով և շատ է մտածում...

— Իսկ ինչու քո գլխիդ այդքան մտքեր կան:

— Ի՞նչու... ի՞նչու... որովհետեւ... պէ՛հ... դէ մէկ կօրեր գասերդ սովորիր...

— Ինչ հիանալի է սարքած խոզի գլուխը ձեր խանութումը:

— Չարմանալի չէ. իմ խոհարարս առաջ եղել է կանանց վարսաւոր:

— Արծիւ, արծիւ. բղաւում էր քանակում մէկ կողէտ: Օրտապահ սպան նայից թոչող թոչունին և ասաց կշտամբմամբ:

— Յիմար, կրում ես արծւով կոճակներ, բայց մինչև հիմա էլ ինչես իմանում, որ արծիւը երկու գլուխ ունի:

Վահան Ա. Ա... 6

ԻՄԱՍՏՆԱԿԱՆ ՄՅԱԿՆԵՐՈՑ

Կեանք և մահ գոտիմարտներ են, բնութիւնը հանդիսական, իսկ տնայնութիւնը, կաշառուած միջնորդ, որ միշտ վաշնակցում է մահւան հետ:

Մեր կեանք, մաթիմաթիկական ճշտութիւն ունի, ծնւելու օրից մինչև կեանք վախճան, զբաղւած ենք թւարանական այդ զբժվարին խնդիրը լուծելով, բաւական է մի սխալ՝ և անա գոտիմարտ ստացում է մահ:

Մարդս յանցանք գործելիս, ամենից առաջ ինքն իրան կարգարարնէ, յետոյ ուրիշների առաջ արդարանալու միջոցները կըմտածէ, և ապա կսկսէ յանցանք գործել ամենայն վստահութեամբ:

Մենք պաշտում ենք աստուածներ, որովհետեւ ասում են, չկայ մէկ աստուած, որ տայ մեր հոգեկան, մտաւոր ու ֆիզիկական բնական պահանջներին լրիւ գոհացում. և ուստի այդ զերբը տանում են մէկից աւելի աստուածներ, ուրեմն պարզ է որ մենք բազմաստուածեան ենք:

Բնութեան մէջ ոչ մի երևոյթ ինձ այնքան խորհել տալ և գրաւել չեն կրցել, որքան մի անշուք սև դազաղ փողոցից անցնելիս, նա միշտ նոր, միշտ ազդու և հետաւաքրքրական է ինձ տեսնել հարիւրաւոր գլխաբաց մարդկանց մի դազաղի ետևից գնալիս:

Մանկութիւնը կեանքի անապատում, մի օաղիս է:

Եթէ չլինէր մահ՝ կեանքը անտանելի կըլինէր:

Ռ. Է. 6

ՊԱՐՍՅԱԿՆԵՐՈՑ

Հեռու եմ մօտիցդ, ոչ մի լուր չկայ ինձ, Այրում եմ, խորովում, ուրիշ ես չկայ ինձ. կուզէի որ չորս կողմը պտոյտ գալի, Բայց ինչ անեմ, որ փետուր ու թեւ չկայ ինձ:

Դահիճների դանակն կեռ է, Սիրունուս ունցերն նոյնպէս. Երկուսն էլ արին կը թափին, Բայց ո՞րքան իրարից տարբեր են:

Սեւ է տաքտիչի հատիկն. Սիրունուս թշի խալը նոյնպէս. Երկուսն էլ շրթունքս կայրնն, Բայց ո՞րքան իրարից տարբեր են:

Պանդուխտ Բազէ:



ՍԻՐԱՆՈՐԸ ՄԵԳՈՒԿԻ ԹԵՂԵՅՑԻՈՅԻՆ

Ես վաղուց ծանօթ էի Չանգուլակեանի կնոջ հետ, ճշմարիտ խոստովանւած մենք սիրում էինք միմիանց, և մեր մէջ ոչ մի ծածուկ բան չկար...

Բայց ես լսել էի, որ Չանգուլակեանի կինը, տ. Աննան, բացի ինձանից ունէր և մի ուրիշ սիրահար... իսկ ով էր այդ սիրահարը... այսպէս ասած այդ երկրորդ Դօն-Ժուաւը, որ իմ արցակիցն էր, ես ոչ մի կերպ չկարողացայ իմանալ...

Է՛հ վերջապէս ինձ ինչ որ նա բացի ինձանից ունի և մի ուրիշը... չէ որ ես նորս ամուսինը չեմ և իրաւունք էլ չունէի ասելու, թէ ինչու դու սիրում ես ուրիշին...

Տարօրինակ բան...

Ձէ որ վերջապէս մենք, մարդիքս միշտ աշխատում ենք տիրանալ մի կամ մի ուրիշի կնոջ սրտին... և անա ասպարէզը, այն բանին ինարկէ ինչի որ ես էի տիրացել կար և մի ուրիշ... որը իմ արցակիցն էր...

Բայց թողնենք այդ, ես այնքան էլ չեմ հետաքրքրում այդ հարցով...

Ես ձեզ կպատմեմ իմ սիրային արկածներից մէկը, որ թէ իւմարիստիքական է, թէ կօմիքական, թէ դրամտիկ և թէ ողբերգութիւն... վերջապէս ինչպէս ով ուզում է այն անունն էլ տայ իմ պատմութեան...

Ամառն էր... Բ... քաղաքի բնակիչները փախչում էին դէպի ամառանոցներ, Չանգուլակեաններն էլ էին պատրաստուում գնալու... պարզէր ինարկէ որ ես ամբողջ երեք ամիս պէտք է զրկւէի, իմ սիրունուց...

Ես առաւօտեան վեր կենալով, քայլերս ուղղեցի դէպի Չանգուլակեանների բնակարանը... Սենեակը մտնելուն պէս տեսայ որ ամեն բան ցիրու ցան և ամբողջ բնակարանը քաօսի էր նման...

Չանգուլակեանը տանը չէր, իսկ նորս կինը, տ. Աննան, իւր իրերն էր դարսում սնդուկի մէջ: Նա տեսնելով ինձ, մօտեցաւ ու փաթաթելով պարանոցովս համբուրեց և ասաց.

— Ա՛խ իմ ճարածիկս, այդ դու ես...  
— Այո՛, — պատասխանեցի ես:  
— Դէ՛հ, սիրելիս, դու ամբողջ երեք ամիս պէտք է զրկես ինձ տեսնելուց. ամի որքան լաւ կլինէր, եթէ դու էլ գայիր ամառանոց, ասաց նա.

— Այո՛, լաւ կլինէր, — պատասխանեցի ես, բայց դժբախտաբար, գործերս չեն ներում...  
— Դու չես ուզում գալ, — ասաց նա կեղծ տխրութեամբ, — եթէ ուզենայիր. դու կարող էիր արձակուրդ վերցնել ձեր կառավարչից...

— Այդ անկարելի է, — ասացի ես, — գործերը չափից դուրս շատ են, և բացի դորսից իմ ընկերներից երեքը արդէն արձակուրդի մէջ են...

Բայց յանկարծ լուսեց դանդի ձայնը...

— Ա՛խ, ամուսինս է... տէր Ասուած, ինչ անեմ... որտեղ թաղցնեմ քեզ, — ասաց նա

և սկսեց այս ու այն կողմը ընկնել տեղ որոնելու համար... յանկարծ նա կանգնեց բաց սնդակի առաջ և թևեցս բռնելով ասաց. — Ծնւտ, շուտ, ի սէր Աստուծոյ, մտիբ այս սնդուկի մէջ...

— Ինչ ես ասում Աննա, դու, խելագարելի ես, ինչ է. ես ինչպէս մտնեմ այս սնդուկի մէջ, — ասացի ես շիտթեամբ,

— Ա՛խ, մտիբ, մտիբ շուտ, ի սէր Աստուծոյ. երկար ճառելու ժամանակ չէ, չէ որ դու ասում ես, որ ինձ համար կրակի մէջ կընկնես... ուրեմն ի սէր ինձ, աղաչում եմ մըտիբ այս սնդուկը...

Չանգի ձայնը նորից լսեց... — Ա՛խ, շուտ, ի սէր Աստուծոյ. նա արդէն փշրում է պահպը...

— Թ՛ու... սատանան տանի... այ քեզ կուրիօզ...

Եւ նա հրելով ինձ դէպի սնդուկը, ես մտայ նորա մէջ, և սնդուկի խուփը փակելով իմ աչքից ամեն բանը կորուսեց... ես կարծես մի խաւար սնդուկի մէջ լինէի

Դեռ լաւ էր, որ սնդուկը մի փոքրիկ ծակ ունէր որից, թէ շնչում էի ազատ օդ և թէ մի աչքով տեսնում ինձանից դուրս կատարւածը...

Ամուսինը ներս մտնելով դարձաւ կնոջը և ասաց.

— Միթէ զանգի ձայնը չէիր լսում...

— Ո՛չ, սիրելիս, զանգի ձայնը, սաստիկ

զբաղւած լինելուս պատճառաւ չէի լսել... — Է՛յ, կառապան... այս սնդուկը տար և ամբարցրու կառքի ետևից...

Թ՛ու, սատանան տանի, ուրեմն ես ստիպւած էի սնդուկի մէջ կառքի ետևում գնալ ամառանոց. այ քեզ օյի՛ն...

Կառապանը մտնելով սնդուկիս, տընքալով բարձրացրեց և կրկին վայր դնելով, ասաց.

— Փն... գրողը տանի... այս ինչ ծանր է: Կառապանը Չանդուլակեանի և նրա կընող օգնութեամբ շալակից իմ սնդուկը...

Բայց, Տէր Աստուծոյ, այն ինչ որ ինձ հետ պատահեց, իմ թշնամուս չպատահի: Խեղճ կառապանը հազիւ էր հասել երրորդ յարկի աստիճաններին, երբ յանկարծ ոտքը սայթաքեց և կառապանը իմ սնդուկիս հետ միասին գնդակի նման գլորեցին մինչև աստիճանների տակը... Ամեն անգամ, երբ սնդուկը բարձրանում և ցածրանում էր, ամեն անգամ իմ մարմինս ցաւից կսկծում էր:

Աստիճանների ծայրից լսում էր տ. Աննայի ձայնը, որը գոռում էր ամուսնու վրայ.

— Ծուտ հասիբ, սնդուկը փշրեց...

Խեղճ կառապանը հայնոյելով վեր կացաւ և մի կերպ սնդուկիս Չանդուլակեանի օգնութեամբ ամբարցրին կառքի ետևում...

Մենք արդէն ամառանոցումն էինք:

Մինչդեռ գործերս երեսի վրայ թափւած, քաղաքում ինձ էր պատում...

Վերջապէս ամեն ինչ անկողնի վրայ Չանդուլակեանները իրենց օգնութեամբ տեսնում մնացին, և ասան մէջ տեղը, իմ սնդուկի մէջ:

Չ. Չանդուլակեանը դառնալով կնոջը ասաց.

— Դէ՛հ այժմ Մաց սնդուկը...

— Սիրելիս, սնդուկը երեկոյեան կրտսեղաւորենք մի տեղ, այժմ ես սաստիկ յոգնած եմ...

— Ինչպէս կուզես, ես մի տեղ կըյարմարեցնեմ նորան:

Սենեակում ամեն ինչ լսեց...

Մի ժամ անցնելուց յետոյ ես լսեցի սնդուկի կողպէքի բացելու ձայնը...

Պուփը բացեց և ես ցատկելով փայտի նման կանգնեցի սնդուկի մէջ... Ես կարծեցի թէ տ. Աննան է...

Բայց, ճ սարսափ, այդ ոչ թէ նա, այլ պ. Չանդուլակեանը...

Նա տեսնելով ինձ սարսափահար դուրս փախաւ գոռալով...

— Յոգնեցէք, սատանայ, սատանայ...

Ես օգտուելով պ. Չանդուլակեանի շիտթելուց, դուրս թոյլ թակարդից, և դուրս գալով փողոց, իսկոյն կառք վարձեցի և ճանապարհեցի քաղաք...

Այդ գէղքից յետոյ, իս երբէք չհանդիպեցի տ. Աննային...

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՔԵՆՈՒ ՄԱՐԿՈՍԸ

Քեռի Մարկոսը մի գարմանալի մարդ էր: Երկուսասարդ ժամանակը նա փախել էր հայրենի տնից, հետը վերցնելով մի քանի հազար բուրձի, որը նրա հարուստ հայրը անգղուլութիւն էր ունեցել դնելու. զբաւեղանի արկղում և մոռացել կողպելու նրան: Եւ մօտ հինգ տարի կորած մնալուց յետոյ, երբ լսել էր որ հայրը արդէն մեռել է, վերադարձել, տիրացել էր նա թողած աճազին կարողութեանը և օր ու գիշեր քէֆեր անելով քամուն էր տալիս փողերը, որոնց աշխատելում ինքը ի հարկէ մասնակից չէր եղել: Այժմ նա մեր քաղաքի ամենահարուստ մարդկանցից մէկն էր:

Ինչպէս պատմում էր, նա (այստեղ միջանկեալ պէտք է ասեմ որ քեռի Մարկոսը մանկութիւնից ի վեր սովորութիւն ունէր պուշաւոր ստեղծ ասելու.) այդ օ տարւայ ընթացքում ոտի տակ էր տուել ամբողջ երկրագունդը և տեղ չէր մնացել, որտեղ նա մըտած չըլինէր: Օրինակ, նա պատմում էր, որ ճաշել էր տաճկաց սուլթանի հետ միասին և նրա կենացը խմել. իսկ վերջինս էլ նախքան էր նրան իւր ամենագեղեցիկ հարձերից մէկին, որը սակայն մինչև Բաթում հասնելը նախից փախել էր: Նա շատ անգամներ էր գիշերել Աֆրիկայի անապատներում, նարդի էր խաղացել Աւստրալիայի

մարզակերների առաջնորդի հետ. Եգիպտոսի պիբամիդները բոլորը ծածկւած էին նրա ստորագրութիւններով, երկու անգամ քիչ էր մնացել խնդրել Միջերկրական ծովում, սակայն անգլիացիք թոյլ չէին տուել նրան այդ բանը անելու, որովհետև նա գրա, այսինքն խեղդելու համար թոյլտուութիւն չէր ձեռք բերել անգլիական կառավարութիւնից: Մի խօսքով նա այնքան զարմանալի արկածներ էր ունեցել իւր ճանապարհորդութիւնների ժամանակ, որ նոյն իսկ Ժիւլ Վերնը, կամ Մայն Րիւն անգամ չէին կարող այդպիսի բան երևակայել իրանց հարուստ ֆանտազիայով:

Քեռի Մարկոսը այնքան գեղեցիկ և յետաքրքիր ձևով էր պատմում իւր արկածները, որ լսողները ամբողջովին տարւում էին նրա պատմութեամբ և նոյն իսկ այն գէպուստն էլ, երբ նա թոյլ էր տալիս համեմելու նոցա (այսինքն իւր պատմութիւնները և ոչ թէ լսողներին) տարօրինակ և անհաւատալի ստերով, այդ բանը անգուպի էր անցնում:

— Սիրելիներս, այս անգամ ես պէտք է պատմեմ ձեզ իմ մի ընկերոջս մասին, որը ամբողջ ճանապարհորդութեանս ժամանակ ընկերակցել է ինձ:

Այսպէս սկսեց նա իր պատմութիւնը, երբ մենք ձմեռային մի օր տաք սենեակում, վառուղ վառարանի շուրջը նստոտած, պատրաստել էինք լսելու նրա զարմանալի արկածներից մէկը:

— Այդ ընկերս տաճկաստանցի էր, մի

յաղթանդամ, առողջ տղամարդ, Ալօ անուսով: Ես նրան պատահել էի Վանում և հետը ընկերացել: Ասուած հոգին լուսաւորէ, լաւ ընկեր էր, խեղճը զժբախտաբար զոհ գնաց մեր ճանապարհորդութեան ժամանակ, Նեղոսի ափերում, մի քաղցած կոկորդիլոսի նա այնպէս լաւ նշան դնող էր, որ հարիւր քայլի վրայ կարող էր կրակել և կպչել ամենաբարակ ասեղին անգամ: Որպէս զիցոյց տամ, թէ իսկապէս նա շատ լաւ նշան դնող էր, կը պատմեմ ձեզ մի դէպք, որը պատահել է մեզ Հնդկաստանում: Մի անգամ երբ մենք նրա հետ որսի էինք դուրս եկել, ծառի վրայ մի բազէ տեսայ նստած և ասացի նրան.

— Ալօ, կարող ես արդեօք նշան բռնել այդ բազէի աչքին և զարկել:

— Կարող եմ, — ասաց նա, նշան բռնեց և կպաւ ուղիղ աչքին: Իսկ անիրաւ բազէն թռաւ և վիրաւոր աչքով փախաւ, կարծես թէ ոչինչ չէր պատահել նրա հետ:

— Ներողութիւն, քեռի Մարկոս, — կտրեց նրա խօսքը ունկնդիրներից մէկը, — այդ ինչպէս կարող էր պատահել, որ գնդակը կպչելով բազէի աչքին, չըջարգէր նրա գլուխը:

— Այ, հէնց բանն էլ դրանումն է, որ Ալօն այնքան լաւ նշան էր դրել, որ գնդակը կպչել էր բազէի աչքին կողքից և գլխին վընաս չէր տուել: Իրանից յետոյ նա շատ անգամներ փորձեց այդ բանը և մի քանի շաբաթաւայ ընթացքում համարեայ թէ բոլոր բազէները աչքերը վիրաւորեց, այնպէս որ

Ես միշտ ուրախութեամբ եմ յիշում այդ ծիծաղաշարժ արկածը...

Ահա թէ ինչով վերջացաւ իմ սիրային ասպարէզը:

Խորհիմ-ժամ-դր-բիւլ



—Որտեղ է իմ ձեզ մօտեցած գործս, ամուսնուս դէմ, դատարանում:

—Դժբախտաբար ոչ... առ այժմս ես վերաքննում եմ և վաղը կամ միւս օրը...

—Փառք Աստուծոյ.—վրայ է բերում տի-

կոյր բազէները իրանք իրանց ոտքով թըռչում էին և գիւղը գալիս, ուր նրանց կարելի էր ձեռքով բռնել:

Մենք լուռ իրար երեսի նայեցինք և չընայած որ մեր սիրտը արդէն կասկած էր ընկել, սակայն չէիրք համարձակուում հակաձողովու նրան:

—Բացի լաւ կրակող լինելուց,—շարունակեց նա իր պատմութիւնը,—Ալօն չափից դուրս քաջ տղամարդ էր և ամենակրիտիքական վայրկեաններին անգամ չէր կորցնում իր սառնասրտութիւնը: Մի անգամ, երբ մենք անցնում էինք Ավստրալիայի կուսական անտառներից մէկով, յանկարծ մեր առաջը ցցւած տեսանք մի հսկայական քօս, երկարութիւնը, ինչպէս ասեմ ձեզ...

Նա սկսեց չորս կողմը նայել, փնտրելով մի որևէ առարկայ, որի չափը կարողանար ցոյց տալ: Մենք լսուած հետաքրքրութեամբ դիտում էինք նրան:

—Նու, երկարութիւնը կը լինէր մօտաւորապէս 25—30 սաժէն, իսկ հաստութիւնը մօտ 3 արշին: Այն ժամանակ, երբ մենք մնացել էին սարսափից սառած, կանգնած տեղներս, բօսն բոցից իր բերանը և... մի ակնթարթ չանցած, խեղձ Ալօն արդէն նրա բերանումն էր... Ես սարսափած միայն կարողացայ արտասանել «մնաս բարով յաւիտեան, ընկերք», իսկ նա սառնարիւն կերպով պատասխանեց՝ «Ի՞նչո՞ւ ես յաւիտեան ասում, մենք դեռ կը տեսնուինք»... Եւ ի՞նչ էք կարծում, պարոններ, այդպէս էլ եղաւ: Ալօն մի մեծ դանակ ունէր, որը միշտ կող-

կինը,—ես չեմ ուշացել... չի հարկաւոր ուղարկել դատարան:

Փաստաբանը տխրելով.

—Ուրեմն դուք հաշուեցիք ձեր ամուսնու հետ:

—Ոչ, ոչ. ես մինչև անգամ չեմ էլ մտածել այդ մասին: Իմ ամուսինս ընկել է շոգեկառքի տակը և վախճանուել: Հիմա դուք, պ. փաստաբան, սկսեցէք նոր գործ, երկաթուղու կառավարութեան դէմ, իմ ամուսնուս վախճանուելու համար:

Օ Տ Ա Ր Ի Ռ Մ Օ Ր

ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՆԵԼ

(Ուսումնարանական մենախօսութիւններ)

I

60 տարեկան ծերունի.—Թանկագին Այս—ինչ. թէև իմ այս հասակումս մի քիչ տարօրինակ կը թւայ այն զգացումը, որ տիրել է ինձ ձեզ տեսնելուց ի վեր, բայց քանի որ նա աճել է մինչև լիակատար պաշտօնութեան աստիճանը՝ ես համարձակուում եմ ինձ թոյլ տալ ձեր ձեռքը խնդրելու... Թանկագինս, ասացէք այսօր գոնէ յանուն ձեր՝ դէպի իմ պատկանելի հասակս ունեցած յարգանքիս և արժէքաւոր թղթերի մէջ ամփոփւած իմ 250 հազար կարողութեանը:

Քիչ պատեանի մէջ կախած էր լինում: Մինչև ես սարսափած մտածում էի, որ մի բռնակցի յետոյ խեղձ ընկերս արդէն բօսի որովայնում ընդմիշտ թաղւած կը լինի, նա հանեց դանակը, երկու ձեռքերի մէջ բռնեց և երբ բօսն սկսեց կուլ տալ նրան, նա դանակը ձեռքերի մէջ առած դէպի նրա որովայնը սլացաւ, կամաց-կամաց կարելով նրա բերանը երկու կողմից... Երբ ես ուշքի եկայ, տեսայ որ գետնի վրայ ընկած է հսկայ բօսի մարմինը, երկու մասի բաժանւած, իսկ Ալօն, նրա մօտ կանգնած, խոտով սրբում է արիւնոտ դանակը... Ի՞նչ կասէք, կը՞, պարոններ... այսպիսի էլ սառնասիրտ մարդ տեսած կ'ըք:

Մենք բոլորս մնացել էինք զարմանքից քարացած և ոչ մի խօսք չէինք կարողանում արտասանել, իսկ քեռի Մարկոսը, մի ծխախոտ վառելով, շարունակեց.

— Մի անգամ էլ Ալօն ազատել է ինձ մահից: Այդ բանը պատահել է Բրազիլիայում: Մենք որսի էինք դուրս եկել վազրիւրի վրայ, երբ երկար թափառելուց յետոյ, արդէն մի մի վազրի հետք էինք գտել և առաջ էինք գնում այդ հետքով, յանկարծ մեր առաջը դուրս եկաւ մի հսկայ, գեղեցկատեսիլ վազր և յարձակեց ինձ վրայ: Ես ըրպէսպէս ուշաթափուեցի և այդ իսկ վայրկեանին հրացանի ձայն լսեցի... Չգիտեմ թէ որքան ժամանակ էի մնացել այսպէս ուշաթափուած, բայց երբ բացեցի աչքերս, տեսայ որ մի քանի քայլ ինձուից հեռու ընկած է սպանւած վազրը, իսկ իմ աջ թևս

II  
50 տարեկան պարոնը.—Թանկագին Այս—ինչ, ես, ի հարկէ, մանուկ չեմ: Իմ սէրը չի կարող լաւայի պէս ետալ և սիրտս հրաբորբոք հրաբղխի նման չի բոցավառուում, սակայն հոգեկան մաքրութեամբ և քնքշութեամբ տոգորւած մեր խաղաղ ու անդորր կապը կարող է մեր բախտաւորութեան գրաւականը լինել մինչև գերեզման: Թէև միջոցներս մեծ չեն, սակայն համարձակուում եմ այն ձեր ոտքերի տակը դնել և յարգանք ձեր ձեռքը խնդրել:

III

40 տարեկան երիտասարդ.—Իմ աստուածութիւն. ձեր հրապոյրը, գեղեցկութիւնը, քնքշութիւնն ու կենսութեամբ բարբը սրտիս ուժգին բարախել ստիպեցին: Ես ձեզ սիրում եմ այն փառաւոր ու բանաստեղծական սիրով, որը փոթորիկ և յուզմունք չէ խնդրում, այլ մղում է դէպի խաղաղ նաւահանգիստ, որտեղ ձեր ջահել գլուխը կը հանգստանայ իմ հանդարտ սրտի վրայ և մենք կը զգանք դրախտային երջանկութիւն: Եղէք իմ կինս, ինձ բախտաւորացրէք:

IV

30 տարեկան երիտասարդ.—Իմ հրամանակից կտրւած է: Բեռի Մարկոսը լուց և բաւականութիւն զգալով, որ իր պատմութիւնը մեզ վրայ ազդեցութիւն է գործել, սկսեց ժպտալով դիտել մեզ, իսկ մենք, տեսնելով որ նրա երկու ձեռքերն էլ ողջ և առողջ իրանց տեղումն են, ակամայից միմիանց երեսի նայեցինք: Մի քանի բռնակ խորին լուծիւն տիրեց, մինչև որ մեզանից մէկը համարձակեց հարց տալ նրան: Բայց, քեռի, կարծեմ, ձեր երկու ձեռքն էլ անջլաս են: — Բեռին յանկարծ կարմրեց, մի քիչ կմկմաց, սակայն իսկոյն ևեթ զգաց իր արած սխալը և դառնալով մեզ, ծիծաղելով ասաց: — Իհարկէ անջլաս են, հապա ի՞նչ էիք կարծում, զբայց գիտէք արդեօք թէ այդ ինչպէս եղաւ: Ալօն հանեց վազրի բերանից կտրւած ձեռքս, դրեց տեղը և այնպէս վարպետութեամբ կարեց նրան մախաթով, որ բոլորովին աննկատելի դարձաւ թէ նա երբևէ կտրւած է եղել... Այ, համեցէք տեսէք, մինչև անգամ ոչ մի հետք էլ չի մնացել: Նա վեր քաշեց սիրտուկի թևը: Մենք բոլորս մօտեցանք, մէկ մէկ ուշադրութեամբ դիտեցինք և տեսանք, որ իսկապէս կտրւածից ոչ մի հետք չի մնացել... Ահա թէ ինչ դիպւածներն է ականատես եղել քեռի Մարկոսը:

շալիք. եթէ գրեմենայիք թէ ինչ օրի եմ ձեզ պատահելու առաջին օրից մինչ այժմ... սակայն ինչո՞ւ երկարացնել, կի՞նա դարձէք, թէ աստուածային արարած: Են ձեզ համար ամեն բանի պատրաստ եմ և դեմօնի պէս՝ բուն կրքով պահելով շրթներեի՝ շշմարտու եմ:

...Ես կրմատակարարեմ քեզ քո երկրային բոլոր ցանկութիւնները, միայն՝ թէ սիրիք ինձ.

Ստանում եմ հարիւր բուրլի սոճիկ, բնակարանն էլ «ազգային»:

Վ

20 տարեկան երիտասարդ. — Օրիորդ Լիզա, թանկագին Լիզըչկա, ես... ես... գիտէ՞ք... ոչ, չեմ կարող (լուսթիւն), ես... երգում եմ... հաւատում էք թէ՞ ոչ... ոչ, չեմ կարող: Ամբողջ օրը հէնց էն է ուզում էի ստել... պատրաստում էի... իմ թանկագին... եղիք իմ կինը... ես սիրում եմ քեզ... խելքս թռչում է... եթէ մեր ծնողները մեզ թող չտան՝ մենք կըփախչինք... Այո... Համաձայն ես... օ, իմ բախտ...

Վ1

15 տարեկան պատանի. — Սոփիկ, ես անցեալ ուրբաթ օրեանից սիրում եմ քեզ. արի ինձ ուզիր: Հայրս ինձ համար վերստացել է գնել, ազնիւ խօսք՝ քեզ էլ հեծնել կըսովորեցնեմ:

Թարգ. Կ. Բարուբեանց

ՀՅՅՈՒՇԻՆ

Ո՛հ կոյս չքնաղ վարդ հարսից,  
Կուգեմ աչերումդ հայեմ...  
Կուգեմ քո ջերմ ջահիլ սերից  
Ըրիմ գրկումդ, խամձիմ:

Կա՛միս լինիմ ջուր, մի խմի՛քք,  
Կա՛միս դառնամ օդ, մի բուրմունք,  
Ի՛նչ որ ցանկաս ես կլինիմ —  
Միայն անդարձ հետդ ծուլիմ:

Վա—Նուօ

Ճաշարանում

— Գարն, այս մանէթը «ղալը է»:  
— Զո՛ր ճաշն էլ «ղալը էր». ինչպէս դուք ինձ ախպէս էլ ես ձեզ,

Տարեդարձ

- Տիրուհին տանն է:
- Նոր դուրս եկաւ:
- Իսկ ես նրա համար նւէր եմ բերել, որ ծննդեան տարեդարձը շնորհաւոր եմ:
- Եթէ այդպէս է քիչ սպասէք, ես գնամ իմանամ, գուցէ տանն է:



Ե Փ Օ Ր Ի Չ Մ Ն Ե Ր

Ո՛ւր է արդարութիւնը.  
— Այնտեղ ուր չկայ մարդ կոչւած էակը:

Էգերի մէջ Քրն է ամենասուրբը.  
— Կինը:

Աստուածների ու գերմարդկանց ճակատագիրն է— լինել մենակ:

Չգիտեմ, Աստուած ինչո՞ւ է կանանց լեզու տւել: Միթէ լեզուն տրւած է միայն և միմիայն ստելու համար:

Մեծքէք մուգիկան ու պօէզեան և մեր աշխարհը կըդառնայ խոզանոց:

Չգիտեմ, Աստուած կայ թէ ոչ, բայց կուզէի որ Նա լինէր: Եթէ նա կայ՝ ես անմահ եմ\*):

Ուքան դարդացած, այնքան ստող է կինը:

Եղբր բացարձակ: Եւ ոչ մի զիջում: Զիջել նշանակում է ամօթալի պարտութիւն կրել: Յանցանք է զիջելը:

Մարդս հրեշտակ էր, երբ կնոջ հետ գետ ծանօթ չէր:

Ի՞նչ է կեանքը, եթէ ոչ երկու ուժերի մէջ կատարւած մի անմիտ ու անխիղճ խաղ: Ուժեր, որոնցից մէկն ստեղծագործում է, շինում. իսկ միւսը՝ կործանում, քանդում:

Այո, կեանքը կոխ է: Կոխը պահանջում է զէնք: Բայց նամարդ է նա, որն այդ զէնքը դժոխից է վերցնում:

Ստել՝ նշանակում է դադարել մարդ լինելուց:

Հերոս է նա, որն իր կեանքի ընթացքում «այո»-ի տեղ «ոչ» և «ոչ»-ի տեղ «այո» չի գործածել:

Ո՞ւմ ծնունդն են օձուժիւնը, աղէտութիւնը, դաւաճանութիւնը...  
— Կնոջ:

Ո՞վ է ամենաողորմելի մարդը:  
— Նա, որը հաւատում է կանանց:

Studiosus

Սարգիս ապէրը առաջին անգամ ինչպէս յայտնի թատրոն:  
Այդ երկկոյնան ներկայացման ժամանակ մի այնպիսի դեր որտեղ մարդասպանը թագնւած սպասում էր, որ յանկարծ Ֆետիսցը հասցնէ մահաբեր կարածը իր դոհին, և այն ժամանակը երբ մօտենում է առաջինի թագնւած տեղը, գիւղացին վեր է թռչում տեղիցը և բղաւում.  
— Ստանում, զգուշացիր, էն քաւթաւը կեղծա կացալ, որ քեզ սպանի...

Պ ո ս տ - Ա ը կ ղ

- Կ. Պոլիս. Նշան էֆէնդի Նալեանին.— Մենք էլ չգիտենք:
- Մոսկա. Կա-Դէլին.— Մարդիկ չփոփոխւում են, կաթողիկ. պատուիրակները որ փոփոխեն ինչ կայ:
- Թիֆլիս. օր Աստղիկին.— Քաջալը դեղ գիւղենայ իր գլխին կանէ, հիմի մենք ենք, սիրոյ դեղ գիւղենանք թէ չէ—մեր Գարեգինը պակաս իշտան ունի՞:
- Թիֆլիս. տիկ. Մ. Ն.— Ասում էք, որ խօսք է տւել. յետոյ ինչ կայ որ— մուրհակներով չեն վճատում, դուք ուղում էք խօսքով վճատեն:
- Բագու. պ. Բէ-բու-Նեանին.— Լաւ իշտան ունէք:
- Բագու. պ. Ս. Տ.— Իրանից աւելի լաւ էր սպում:
- Զարաթալա. պ. Ա. Ն.— Լօտոյի մասին խօսեին անգամ յանցանք է, ուր մնաց թէ խաղալը:
- Թարիզ. Ս. Բզ.— Լէյ գիդի հա՛, ժամանակ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ՍԵՊՈՒՆ «ԳԻՐԱՆԻՆ»  
— Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԲՆԿ. ՄՈՍԿՈՎ.  
Պահեստը Թիֆլիսում, Գալաթիսի պր.  
— Պահանջեցէք ամենուրեք —  
52-2

\*) Կայ, մաշ կայ, — Աստուած գիւղենայ կայ.  
Գաւ. Կալ.

ԲԵՏԷՐՅ.



—Ոչ մի դեղ սրան այլևս չէ օգնում—խիստ է հիւճուկ—արդեօք էհրլիսի 606-ը չըսրակէնք—գուցէ թէ օգնէ:  
 «ՀՈՐԻՉՈՆԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ



ԲԵՏԷՐՅ.

Այժմ տեսք. մեր կաթողիկոսական թեկնածուից ով աւել արժանաւոր կարող է լինել. քնա մենք այսպէս կը փքենք. տեսնենք հակառակորդները սրա դէմ ի՞նչ կարող են անել:

МАГАЗИНЪ  
КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскіи пассаж№ 8

громадная экономія

шведскаго композиціон. бѣлья

Носится не менѣе

двухъ лѣтъ

Постоянный большой

выборъ свѣжаго товара

ВОРОТНИКОВЪ,

МАНИШЕКЪ И

МАНЖЕТЪ

По фабричнымъ цѣнамъ

Передѣлка въ любой фасонъ

бесплатно

Продаются портняжныя принадлежности, как-то пуговицы, подкладки, мѣль и прочее.

ИМѢЕТСЯ ТУТЬ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ

Остерегайтесь поддѣлокъ и подражаній

Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8

0—15 (о. м.) М. А. КАЛТАКЯНЪ



ПАПИРОСЫ

**ГОЛУБКА** 10 шт. 3 коп.

ФАБРИКИ А.ЭНФИАДЖІАНЦА

ФАБРИКИ А.ЭНФИАДЖІАНЦА

ПАПИРОСЫ

**ИНТЕЛЛИГЕНТНЫЯ**

ЦѢНА 25 шт. 15 к

10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ

**ЭКСТРА**

15 шт. 6 коп.

ФАБРИКИ А.ЭНФИАДЖІАНЦА

Բերլինի համալսարանի

ԲՐԵՇԱՆՆԵՐ

Գ. Գ. ՄԵԼՐԱՐԵԱՆՅ

ներքին հիանդութիւնների՝ առանձնապէս կրճերի, թՈՔԱԽՏ և ՍՐՏԻ

հիանդութիւններ: Սրտկուտ

ներ շահ ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ

Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւ.

ժամը 9—11 և երեկ. 5—6 ժամը:

Католическая ул. д, № 10.

Телефонъ 792. 100—31

Մօտ օրերում լոյս կըսենի, որի առթիւ և  
Բ Ա Ց Ի Ա Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Բ Ի Գ Ե Ր Ո Յ Յ Ո Ն Ե Մ Ի Մ Ո Յ Յ Յ

**„ՀԱՅ ԱՆՑԵԱԼԸ“**

անունով մեծադիր բառերի քիչ ընդօրինակումները (копія), որի օտիզի- նարը քանդակած է մասմառիօնի վրայ 12 տարուան ընթացքում և գնահատում է հազարներ:

Բառերի քիչը, որի երկարութիւնն է 18 վերջ., լայնութ. 13 վ., իսկ հաստութիւնը՝ 1/2 վերջուկ, ներկայացնում է 15 հայ թագաւոր- ների և 5 եկեղեցիների բիւստերը և ս. Էջմիածինը.

Ընդօրինակումները ձուլելու են ամենաազնիւ տեսակի այլբաս- արից (гипсъ), որով հնարաւոր կըլինի վերարտադրելու օտիզիանալի նրբութիւնները իր բոլոր մանրամասնութիւններով:

Սոյն գործը ամեն մի հայ ընտանիքի առաջնակարգ գարգը կը լինի, որ իր տեսակի մէջ նորութիւն է ոչ միայն մեզանում, այլ և Ռուսաստանում ու արտասահմանում:

Բաժանորդագինն է 10 ռ., որից 5 ռ. բաժանորդագր-ելիս, իսկ մնացածը՝ բառերի քիչը ստանալուց: 10 օրինակ միանգամից պահան- վող՝ 1 օր. ուղարկում է ձրի: Ծանապարհի և այլ ծախքերը մեր ըրայ է: Բաժանորդագր-ել կարելի է միմիայն հեղինակի մօտ հետե ետինհասցէով. Թիֆլիս, Կարусельный спускъ № 1 Ваагну Сте- пановичу Демирчоглянцу. 0—12

СПЕЦИАЛЬНАЯ МАСТЕРСКАЯ  
ЗАГОТОВОКЪ  
**О. О. Агабабянца**  
Приемъ заказовъ всевозможн. заготовокъ  
ПО УМВРЕННЫМЪ ЦѢНАМЪ  
Исполненіе къ сроку и аккуратно  
Тифлисъ, Мухранская ул. № 4. 3—1



Первокл. ресторахъ  
**„АННОНА“**  
„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. итаетъ вновь приглаш. италянскій струнный ор- кестръ, съ пѣвнємъ, участіемъ пѣвиць —г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКЪ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; биллиарды. Имѣются кабинеты.

Получены Сибирскіе рябчики и устрицы.

52—27





Կինը.—Ա՛խ, ինչու ուշացրին ճաշը:

Մարդը.—Որովհետև մեր սովորական ճաշարանում չեմ պատերիբլ:

Կինը.—Շատ իզուր: Ես ուրիշ տեղերի պատրաստած ճաշը չեմ կարող ուտել: Գնա այս բուլեջիս Армянский базаръ, № 13, «Փլորա» ճաշարանը և շուտով պատերիբլ, որ բերին: Զարմունալի է, թէ ինչու ուզում ես ինձ զրկելնրանց պատրաստած համեղ և մաքուր կերակուրներից:



Հիանդը.—Գ. բժիշկ, ստամոքսս խանգարւած է, կերածս չեմ կարողանում մարսել:

Բժիշկը.—Ես քեզ խորհուրդ եմ տալիս յաճախել միմիայն «Փլորա» ճաշարանը, Армянский базаръ, № 13, որտեղ ամենամաքուր և համեղ կերակուրներ են պատրաստւում, մաքուր իւղով. մի շաբաթ յաճախելուց յետոյ, եկ ինձ մօտ: Այլապէս չեմ կարող ձեր ստամոքսին խելքի բերել:



— Մաղամ Սան-ժէն, ուր էք շտապում:

— «Փլորա» ճաշարանը, ամսավճարի ժամանակն է, ուզում եմ վճարել, եթէ ոչ հաւանական է, որ դադարեցնեն և ես զրկւեմ այնտեղ պատրաստած համեղ և մաքուր ճաշից, նամանաւանդ, որ շատ էժան է, ամսական վճարում եմ ընդամենը 6 ր.:

— Ո՞րտեղ է այդ ճաշարանը, ես էլ կըզբւեմ:

— Армянский базаръ, № 13, շատ ձեռնտու է ամսով ճաշողների համար:



— Օ՛, Միշա, ինչ համեղ ճաշ էր... ու՛՛՛՛ քանի ժամանակ է այսպէս չէի կշտացել, մանաւանդ այս դարեկները բոլորովին թարմացրեց ոյժերս:

— Այո, ես վաղուց է, որ յաճախում եմ այստեղ: Կսիր, չմոռանաս հասցէն՝ Армянский базаръ, № 13, «Փլորա» ճաշարան:



— Դուք ինչ ուզում էք ասացէք, ես «Փլորա» ճաշարանից ձեռք չեմ վերցնի, և ինչո՞ւ պէտք է ձեռք վերցնեմ. երկու տեսակ կերակուրը 20 կ., դարեկը շերտ 15 կոպ., թարմ և տաք պերսիկովը 5 կ. այդպէս էլ ամեն բան էժան: Սեղանները մաքուր և սպիտակ սփռոցով ծածկած, ծառաները քաղաքավարի, էլ ինչո՞ւ չըզնանք:

— Յառաջ, դէպի «Փլորա» ճաշարանը, Армянский базаръ, № 13ը ուռն:

3—2



### Գ Ի Մ Ն Ա Ջ Ի Գ Յ Ի Ն VIII ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻ

ցանկանում է աշակերտունիների հետ սերտողութեամբ պարապել. պատրաստում է նաև երեխաներ բոլոր միջնակարգ դպրոցների համար: Հասցէ՝ Մոսկովսկայա փող. № 19 0—17


### Ա. Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ Մ. ՏԵՐ - ՄԻՆԱՍԵԱՆ

վերսկսել է հիւանդներին ընդունել. ատամների և բերանի խոռոչի վերաբ.՝ Տեխնիկ. աշխատանքների համար հրաւիրւած է արտասահմանից ատամնաբույժ տեխնիկ, որը պատրաստում է սոկէպատ ատամներ (couronnes), սոկէշար ատամներ առանց կառուցուկի (pièces en or), նաև ողջ ատամնաշարքեր (pait ou brisiche), ամբողջ ատամների վրայ պտուտակաւոր ատամներ (Dent à pincet) և մայր ատամների վրայ ադամանդով բանիլ (Dent à diamantés): Ընդունելութիւնը՝ տո. ժամը 10—2, երեկ. ժամը 4—6, կիրակի օրերը ժամը 10—12-ը: Միխայլովսկի պր. № 43 100—31

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ  
Ս. ՔԷՀ. ՏԵՐ-ՅՈՎՀԵՆՆԻՍԵԱՆԻ  
Армяно-григоріанский календарь  
на 1912 годъ.  
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.  
Դիմել՝ Ставрополь губ., Свящ. С. Теръ-Ованнесяну. 10—5


ՎԱՃԱՌՈՒՌՈՒՄ Է ԲԺՇԿԱԳԵՏ ՄԻՆԱՍ  
ՄՈՒՐԱԴԵԱՆԻ  
ՍԻՖԻԼԻՍ  
Հանրամատչելի ընթերցանութեան համար և  
Պատկերագարը  
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն  
Վաստերմանի եղանակով սիֆիլիսի որոշելը.—Միջոցներ սիֆիլիսի վարակումից պաշտպանելու համար.—Ամուսնական վկայականներ.—Դեղեր.—Մուգիկ եօզ.—Էնրիխ-Հատայի նոր դեղ.—Եզրափակութիւն.—Գործածելիք դեղատոմսեր:  
Գինն է 80 կոպ.  
Դիմել բոլոր գրավաճառներին կամ հեղինակի բնակարան. Ртищевская №1 00-22

ԱԼԷԲՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ  
Բժշկապետ  
Ալետիք Բարսեղեանը  
ընդունում է  
Հ Ի Ի Ա Ն Դ Ն Ե Ր  
Եզ. Իվ. Տէր Մարտիրոսեանի տանը.— Բուլշայա Սլաբոչսկայա փողոցի վրայ: 10—2



—Փակենք, փակենք բերանը—գոլորշի է բարձրանում և կարող է... ով գիտէ ինչ էր պատահել—կաթ-սայի ջուրը կարող է ամբողջովին գոլորշիանալ:

Մ Ե Ր Ս Ը



Գործս լաւ է գնում. որտեղ նայում ես՝ առիթ գինաքաւուցեան.—կարծես թէ կուրսս պիտ ըարձրանայ: